

347.6
4-15

Հ. Ա. Կ. Կ. Բ. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԲՈԺԻՆ

№ 4 ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԵՐԻԱ.

Ա. Ա. ԿԱԼԻԳԻՆԱ.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ոռուերենից բարգմանեց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

300
2667-44

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎԵՎԱ-1925

1 MAR 2010

347.6
4-15

Հ. Ա. Ա. Ա. ԲՈՂՈՔՈՒՆԻՉՈՒ-ԳԵՂՋԱՅՈՒՆԻ ԲՈԺԻՆ

№ 4 ԲՈՂՈՔՈՒՆԻՉՈՒ-ԳԵՂՋԱՅՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

300
2667-ԿԱ ԵՐԱՎԵԱՆԱԿԱՆ ՄԵՐԻԱ

Ա. Ա. ԿԱԼԻԳԻՆԱ



ԳԵՂՋԱԿՈՒՅԻՆ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՅԵՎ. ԲԱՏԱՆԻՔՈՒՄ

1003
12810

Պուստեհից բարգմանց Հ. ՀԱՐԱԽՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1925

024 FEB 2014

37.841

005
ԱՐ. ՖՃՈ. 9

ՄԻՔԱՆԻ ԽՈՍՔ

Ընկ. Կալիգինայի այս գրքույկը շատ ոգտակար ե մեր բանվորուհիների և մանավանդ գեղջկուհիների համար։ Այստեղ ընկ. Կալիգինան պարզ կերպով ցույց ե տալիս, թե հին կառավարության որով ինչպիսի ծանր պայմաններում եյին գտնվում ընդհանրապես կանայք, և մանավանդ գեղջկուհիները։ Այսուհետև պարզաբանում ե այն տարբերությունները, վոր կան բուրժուական յերկրներում և Խորհրդային Միության մեջ կանանց իրավունքների նկատմամբ։ Գիրքն ավելի մանրամասն բացարում ե, թե խորհրդային որենքները ինչպես են պաշտպանում կնոջ և յերեխայի շահերը, թե ընտանեկան կյանքում և ամուսնական հարցերում ինչ փոփոխություններ են արված, ինչ որենքներ են հրատարակված, վորոնք ամեն դեպքում պաշտպանում են կնոջ շահերը և կնոջն ազատում են ընտանիքի և տղամարդու բանություններից։

Հենց սրա համար ել ամեն մի կին, ամեն բանվորուհի և գեղջկուհի պիտի կարդա այս գրքույկը։

Մեր պատգամավորուհիների համար այս գիրքը այն մեծ նշանակությունն ել ունի, վոր կարելի յե այս գիրքը վերցնել վորպես ձեռնարկ, վորպես առաջնորդ, դասագիրք և պատգամավորական ժողովներում մաս-մաս կարդալ բացարել, իսուել, պարզաբանել ու հիմնովին ուսումնասիրել կնոջ դրությունը անցյալում, բուրժուական յերկրներում և խորհրդային իշխանության որով։

Հայաստանի իրականությանը հարմարեցնելու և մեր աշխատավոր կանանց համար ավելի հասկանալի դարձնելու նպատակով գրքիս թարգմանիչը բանվագեղջկուհու բաժնի հանձնության մոտ։

008
ԱՐ. ՏԸՆ

ՄԻՔԱՆԻ ԽՈՍՔ

Ընկ. Կալիգինայի այս գրքույկը շատ ոգտակար ե մեր բանվորուհիների և մանավանդ գեղջկուհիների համար: Այստեղ ընկ. Կալիգինան պարզ կերպով ցույց ե տալիս, թե հին կառավարության որով ինչպիսի ծանր պայմաններում եյին գտնվում ընդհանրապես կանայք, և մանավանդ գեղջկուհիները: Այսուհետև պարզաբանում ե այն տարբերությունները, վոր կան բուրժուական յերկրներում և Խորհրդային Միության մեջ կանանց իրավունքների նկատմամբ: Գիրքն ավելի մանրամասն բացարում ե, թե խորհրդային որենքները ինչպես են պաշտպանում կողը և յերեխայի շահերը, թե ընտանեկան կյանքում և ամուսնական հարցերում ինչ փոփոխություններ են արված, ինչ որենքներ են հրատարակված, վորոնք ամեն դեպքում պաշտպանում են կողը շահերը և կողն ազատում են ընտանիքի և տղամարդու բռնություններից:

Հենց սրա համար ել ամեն մի կին, ամեն բանվորուհի և գեղջկուհի պիտի կարդա այս գրքույկը:

Մեր պատգամավորուհիների համար այս գիրքը այն մեծ նշանակությունն ել ունի, վոր կարելի յե այս գիրքը վերցնել վորպես ձեռնարկ, վորպես առաջնորդ, դասագիրք և պատգամավորական ժողովներում մաս-մաս կարդալ բացատրել, խոսել, պարզաբանել ու հիմնովին ուսումնասիրել կողը դրությունը անցյալում, բուրժուական յերկրներում և խորհրդային իշխանության որով:

Հայաստանի իրականությանը հարմարեցնելու և մեր աշխատավոր կանանց համար ավելի հասկանալի դարձնելու նպատակով գրքիս թարգմանիչը բանվ.-գեղջկուհու բաժնի հանձ-

Նարարությամբ շատ փոքր չափով փոփոխություններ ե մըտ-
ցըրել գրքի ռուսերեն բնագրի մեջ։ Համված են այնպիսի
կտորներ, վոր վերաբերում են մեր յերկրում գոյություն չու-
նեցող յերեսութների, և, ընդհակառակը, ավելացրած են վորոշ
թվեր և որինակներ, վորոնք հատկապես մեր յերկրին են վե-
րաբերում։ Կարծում ենք՝ գրքի հեղինակը ներողամիտ կլինի-
այս խնդրում։

Հ. Ա. Ա. Ա. Բանվորուհու Գեղջկուհու բաժին

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ
ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Կապիտալիստական հասարակության հիմքը մասնավոր
սեփականությունն ե, և կապիտալիստական հասարակության
մեջ բուրժուազիան ճնշում ե աշխատավոր մասսաներին։ Այդ
ե պատճառը, վոր կապիտալիստական հասարակակարգում կինը
կրկնակի յե ճնշված—թե վորպես աշխատավոր և թե վորպես կին։

Չնայած նրան, վոր գեղջկուհին գյուղական տնտեսու-
թյան մեջ շատ խոշոր դեր եր կատարում, ելի նրան մարդ
չեցին համարում վոչ ընտանիքում և վոչ ել հասարակության
մեջ։ Մեր ժողովրդական տուածն ել շատ լավ ցույց ե տալիս
այդ բանը։ Խսած կլինեք, վոր միշտ ասում են. «Մազը յերկար,
խելքը կարձ»։ Սրանով ուզում են ասել, թե կինը միշտ տղա-
մարդուց խելքով ցած ե, նրան հավասարվել չի կարող։

Ճիշտ ե, գյուղացին ել հասարակության և պետության
մեջ ճնշված եր, շատ խիստ շահագործվում եր, բայց նա իր
ընտանիքում լիակատար տեր ու տիրական եր, իսկ գեղջ-
կուհին, վոր գյուղացու չափ ճնշված եր, իրավունքից զըրկ-
ված եր հասարակության մեջ, իր ընտանիքում ել մարդ չեր
համարվում, այլ միայն մի աշխատող ձեռք։ Հենց ճնշված
որից աղջիկն ընտանիքի պատուհան եր համարվում։ Գյու-
ղացին ուրախանում եր, վոր իր կովը, խոզը, ձին կամ վորե-
վե անասունը ծնում եր, բայց յերբ ինքը մի աղջիկ եր ու-
նենում, դրա համար նա չեր ուրախանում, վորովհետև աղ-
ջըկա համար նա հողաբաժին չեր ստանում, և իր տնտեսությու-
նը աղջկանից վոչ մի ոգուտ չեր ունենում։ Այն ընտանիքը,
վոր շատ աղջիկներ ուներ, կիսաքաղց կյանք եր վարում,

նրա հողերը չեյին ավելանում, իսկ աղջիկներին հազցնելու՝ կերակրելու, մեծացնելու և ամուսնացնելու համար ահագին ծախսեր եյին հարկավոր: Դրա համար ել այդպիսի ընտանիքն ընկնում եր վորևե կուլակի ազդեցության տակ, վորպեսզի նրա շվաքի տակ ապրի և կարողանա իր աղջիկների համար ոժիտ (բաժինք) պատրաստել, վորովհետև ինչքան ել աղջիկը սիրուն լիներ, առանց ոժիտի «կարգին» ընտանիքում «մարդու տալ» չեյին կարող, իսկ աղջկա «տանը մնալը» շատ մեծ ամոթ ու խայտառակություն եր թե ընտանիքի և թե աղջկա համար:

Յեթե պատահեր, վոր մի աղջիկ աղքատության պատճառով չկարողանար մարդու գնալ, յեթե նա հին սովորությունները վոտնակոխ աներ ու իր սիրած տղամարդու հետ ապրել և առանց պսակվելու նրանից յերեխա ունենար, պըծավա... այդ աղջկան դուրս կքշեյին տանից և կանպատվեյին, կհալածեյին.

Յեկ խեղճ աղջիկը, վորպեսզի իր «խայտառակության» հետքը ծածկի, կամ ինքն իրեն եր սպանում կամ իր անմեղ զավակին եր վոչնչացնում:

Գյուղական ընտանիքում աղջկա կրթության ու դաստիարակության վրա յել այնքան ուշը չեյին դարձնում, ինչքան տղայի կրթության վրա: Ինչքան ել ընտանիքը աղքատ լիներ, ինչքան ել նեղ պայմաններում լիներ, ելի տղայի կրթության մասին մտածում եր, նրան գրել-կարդալ եր սովորեցնում, վորևե արհեստի յեր ատալիս, վոր մի բան սովորի ու մեծանալուց հետո «մարդ դառնա, մի բանի տեր լինի»: Իսկ աղջիկը հենց իր մանկությունից ծանրաբեռնվում եր ընտանեկան այնպիսի մանր-մունը հոգսերով ու գործերով, վորոնք նրան վոչ միայն չեյին զարգացնում և աչքաբաց չեյին դաշնում, այլև, ընդհակառակին, ավելի բթացնում, թմրացնում եյին նրա միտքն ու գիտակցությունը:

Այն, ինչ վոր հին սովորությունների և ընդունված որենքների համաձայն թույլատրվում եր տղա յերեխային, այդ նույն բանն արգելվում եր աղջկանը: Յեկ այսպես-հին սովորու-

թյունների ու կրոնական նախապաշարումների ձնշման տակ աղջիկը շատ ավելի մութ, խավար, ճնշված ու անզարգացած եր մեծանում, քան թե տղան:

Բայց ելի աղջիկը քանի դեռ աղջիկ եր, քանի չեր ամուսնանում և չեր ծանրաբեռնվում ընտանիքով, վորոշ չափով ավելի ազատ եր լինում, քան թե ամուսնալուց հետո:

Կապիտալիստական հասարակության մեջ ամուսնությունը զանազան հաշիմսերի հետ եր կապված, և յերբ աղջիկն ամուսնանում եր, ընկնում եր տղամարդու իշխանության տակ, բոլորովին յենթարկվում եր իր ամուսնու և նրա ընտանիքի կամքին և միանգամայն կորցնում եր այն չնչին աղատությունը, վոր նա ուներ աղջիկ ժամանակ:

Ծնողները միշտ ել վախենում եյին, թե հանկարծ իրենց աղջիկը սրա-նրա հետ կընկնի, հարաբերություն կունենա և առանց ամուսնանալու յերեխա կծնի: Յեկ վորպեսզի այդ չպատահի, աշխատում եյին աղջկան շուտով ամուսնացնել, առանց նայելու, թե աղջիկը մեծացել ե, հասունացել և ֆիզիկապես զարգացել ե թե վոչ:

Այսպիսի վաղաժամ ամուսնությունը՝ աղջկան ուժահատում, թուլացնում եր, և աղջիկը դեռ ջահել հասակում սկսում եր պառավել:

Գյուղական ընտանիքը միշտ աշխատում եր իր աղջկան հարուստ մարդու տալ, թեկուզ այդ մարդը ծեր լիներ, թեկուզ աղջիկը նրան բոլորովին չսիրեր, միայն թե փեսացուն հարուստ լիներ: Դրա համար ել ամուսնությունն աղջկա համար բախտավորություն չեր. այդպիսի ամուսնությունն աղջկանից խլում եր նրա ամենաչին աղատությունը և նրան կատարյալ ստրուկ եր դարձնում:

Շատ ձիշտ ե նկատել մեր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, վոր գրել ե, թե գյուղական ջահել հարսը տանը նստած մաղերը սանրում ե ու հետն ել ձենով յերգում՝

| | |
|--------------|----------------|
| «Ախ, ու ըլի, | ցավ ու խնդում՝ |
| չըլի, փլի | փակված սրտում՝ |
| ծնված որը | ծիծաղ չկա, |
| | ախ չկա»: |

Չնայած ընտանեկան այս ծանր պայմաններին, չնայած ամուսինը այդքան ճնշում եր կնոջը, բայց ելի կինը համբերությամբ տանում եր այս բոլորը, ամուսնուն չեր թողնում հեռանում, վորովհետև այսպիսի քայլ անելն անհնարին եր: Մարդուն թողած կինը արհամարհվում, նախատվում եր և հեռացվում եր վոչ միայն իր ընտանիքից, այլ և ամբողջ հասարակությունից: Վոչ վոք նրան տեղ չեր տալիս. իր ծնողներն ել նրան տեղ չեյին տալիս, վորովհետև մարդուն թողնելը մեծ անպատճություն եր համարվում նաև կնոջ ծնողների համար: Մարդուն թողած կինը քաղաք գնալ, այնտեղ իր աշխատանքով ապրել չեր կարող, վորովհետև նրան անձնագիր (բաշլորտ) չեյին տալիս. իսկ յեթե վորուե հսարով կինը քաղաք գնար, ամուսինը ցանկացած գեղքում կարող եր ստրաժնիկների, վոստիկանության միջոցով նրան յետ քաշ տալ, գյուղ բերել:

Յարական կառավարությունը 1909 թվին իրավունք տվեց, վոր կնոջ անձնագիր տան՝ առանց նրա ամուսնու համաձայնության, բայց այդ որենքն ել գեղջկուհու համար վոչ մի նշանակություն չուներ, վորովհետև վոչ վոք այդ որենքի վրա ուշք չեր դարձնում, ելի կնոջ քեփը հարցնող չեր լինում:

Կապիտալիստական որենքներն ու դատարանը պաշտպանում եյին հարուստների և ուժեղների շահերը: Ասած ե՝ «ուժեղի հետ մի կովիր, հարուստի դեմ դատ մի սկսիլ». միենույն ե, բան չի դուրս դալ: Իսկ գեղջկուհին ավելի ևս խեղճ ու խավար եր և որենքներից տեղեկություն չուներ. ինչ կարող եր անել, ում գանգատվեր: Իսկ յեթե որենքից տեղեկություն ել ունենար, կարող եր դատարան դիմել. դատարանում վոչ բանվորն եր նստած, վոչ ել գյուղացին, վոր գեղջկուհին կարողանար ազատ գնալ, իր ցավը հայտնել, այլ նստած եր մի աղա, վորի հետ խոսելը գեղջկուհու համար խաթա յեր: Ել ում հայտներ իր ցավը, ով կլսեր նրան: Գեղջկուհին ցարական դատավորի աչքում մի հիմար անսառուն եր, դատավորը խսկի կլսեր նրան, վոր նրա ցավ ու դարդը հասկանար ու մի ձար աներ: Դատավորն ել մյուս բուրժուաների նման եր մտածում, թե կինը պիտի հպատակի իր ամուսնուն և յեթե չի

հպատակվում, չի լսում իր մարդուն և ուզում ե նրանից բաժանվել, ուրեմն՝ «այդ կնոջ ճամպին ծուռ ա, նրա վոտը դուսն ա»: Այսպես մտածող դատավորը, պարզ ե, վոր գեղջկուհուն չեր ոգնի, այլ ընդհակառակը, նրան մեղավոր կհաներ:

Գեղջկուհին այս բոլորը լավ գիտեր. հենց այդ պատճառով ավելի լավ եր համարում լուռ ու մունջ տանել իր ցավերը, դիմանալ ամուսնու և նրա ընտանիքի բռնություններին, քան թե գնալ դատարան և ամբողջ գյուղում և շրջանում խայտառակվել:

Այսպես, ուրեմն, հասարակական կարծիքը, տնտեսական ծանր պայմանները, սոցիալական-հասարակական որենքները—այս բոլորս ստիպում եյին կնոջը, վոր նա հաշտվի իր «Ճակատագրի» հետ, լուռ ու մունջ ստորանա, դիմանա ամնն ճընշումի ու վիրավորանքի՝ թե ընտանիքում, թե հասարակության մեջ և թե պետության առաջ:

Շատ անգամ մարդ ու կին իրար հետ ապրում եյին ինչպես ոտարներ: Պատահում եր՝ ամուսինն իր կնոջ չեր սիրում, նրան թողնում եր, գնում ուրիշ կնոջ մոտ. և այդ նրան թույլատրվում եր: Բայց յեթե կինը համարձակվեր ուղիղ նայել միտղամարդու դեմքին, պըծավ... նրան խսկույն կղատապարտեյին, կնախատեյին ու կանգատվեյին:

Յեկ ընտանեկան այս խայտառակությունը, այս կեղծիքն ու խաբեբայությունը կապիտալիստական հասարակության մեջ քողարկվում, ծածկվում եր ամուսնության «սրբությամբ»:

Յեկեղեցին ԱՄՐԱՊՆԴՈՒՄ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒԽԲՆԵՐԸ.

Յեկեղեցին մեր անուսում, անգիտակից ու խավար գյուղացիության վրա շատ սեծ ազգեցություն ե ունեցել. Նա ամեն կերպ նպաստել ե կնոջ ստրկացմանը թե կենցաղի և նիստ ու կացի մեջ և թե իրավական դրությամբ: Յեկեղեցին ե, վոր մեր ժողովրդի, հատկապես գյուղացիության մեջայն հասկացողությունն ե ստեղծել, թե կինը ստոր արարած ե, վոր նակացական պատճեն և հպատակի իր տիրոջը, իր ամուսնուն:

Պատկի ժամանակ յեկեղեցում ասում եյին. «Ինչպես վոր Քրիստոսը մեր յեկեղեցու գլխավորն է, այնպես ել ամուսինը եր կնոջ գլխավորն է. կինը պետք է վախենա իր ամուսնուց, պետք ե հպատակվի և սիրի նրան»:

Կինը վորպես ստոր արարած, վորպես ամբողջ մարդկությանը մեղեթ մեջ զցող, մեղավոր եր համարվում և իրավունք չուներ յեկեղեցու խորանը մտնելու, իրավունք չուներ լինելու հոգեորական խարերա և ժողովրդի գիտակցությունը մըթնացնող տերտեր:

Յեկեղեցին ամեն կերպ ամրապնդում եր գյուղի նախապաշտումները, փորոնք տղիտության ու խավարամտության հետևանք եյին. Յեկեղեցին դեմ եր գնում, հակառակ եր ժողովրդի լուսավորությանը, վորովհետեւ գիտեր, վոր յեթե դյուզացիները լուսավորվեն, ել նախապաշարմունքներին չեն հավատա, կոիվ կսկսեն նախապաշարմունքների դեմ, իսկ դրանով կկռվեն և յեկեղեցու ստոր խարեբայության դեմ, վորը ծառայում ե կապիտալիստների, բուրժուաների շահերին.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՐ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ ՃՆՇՎԱԾ ՊԱՇԵԼ.

Թագավորի որենքները չեյին աշխատում վերացնել այն ստոր ու խայտառակ սովորությունները, փորոնք ձնշում եյին կնոջը. ընդհակառակը, այդ որենքներն ավելի ամրապնդում եյին այդ սովորությունները. Յարական որենսողքի մեջ մի կետ կար, վոր պարզում եր կնոջ և իր ամուսնու իրավունքների սահմանները. Այդ որենսողքի մեջ առված եր. «Կինը պարտավոր ե հպատակվել իր ամուսնուն, ինչպես ընտանիքի մեծավորին, պարտավոր ե նրան հարգել, ամեն մի հրամանը կատարել, ամեն տեսակ ծառայություն անել և կապված լինել իր ամուսնու հետ»: (Որենսողքի I մաս, 10 գլուխ. 107 յերես): Նույն գրքի 108 յերեսում գրված է. «Կինը պարտավոր ե հպատակվել իր ամուսնու կամքին»: Ապա՝ նույն որենսողքի 109 և 1202 յերեսներում գրված է. «Յերբ ամուսինը մի տեղից փոխադրվում է մի ուրիշ տեղ, կինը պարտավոր է»

«հետեւ նրան», «կինը չի կարող վորեւ տեղ աշխատանքի վարձվել, առանց իր ամուսնու թույլտվության»:

Թագավորական որենքները պաշտպանում եյին ուժեղների շահերը. Ճիշտ այդպես ել, այդ որենքները տղամարդու իրավունքներն ավելի բարձր եյին համարում կնոջից, վորովհետեւ կինը մարդկության ավելի թույլ մասն եր, և որինական եյին համարում այն զրությունը, վոր կինը հպատակ և յենթարկված լինի տղամարդուն՝ թե ընտանիքում և թե հասարակության մեջ:

Գեղջկուհու շահերը թագավորական որենքներով վոչ միայն չեյին պաշտպանվում, այլ, ընդհակառակն, ամեն կերպ կրծատվում և սահմանափակվում եյին նրա իրավունքները՝ թե ընտանիքում, թե հասարակության մեջ և թե պետության առաջ:

1905 թվից հետո, յերբ սկսեցին ծավալվել գյուղացիական շարժումները, պահանջ դրվեց, վոր գեղջկուհուն ել իրավունք տրվի հողաբաժին ստանալու, և վոր գեղջկուհին ել իրավունք ունենա ձայն տալու ժողովներում, գյուղապետների (բյուխվա) և շրջանային վարչությունների ընտրության ժամանակ: Բայց պետական սենատը այս պահանջին պատասխանեց, թե կանայք ընտանիքում վոչ մի իրավունք չունեն, և գյուղական հիմնարկներում ել ընտրական պաշտոն վարել կամ ընտրել չեն կարող:

Չնայած նրան, վոր թե յեկեղեցին և թե պետությունը ամեն կերպ աշխատում եյին ընտանեկան այդպիսի դրությունն ամուր պահել. — վորովհետեւ դա կապիտալիստական հասարակարգի հիմքն եր. — այնուամենայնիվ 1914 թվի պատերազմը մեծ փոփոխություն մտցրեց ընտանեկան և ամուսնական կյանքում:

Տղամարդու պատերազմ գնալը կործանեց վոչ միայն պատկի կեղծ սրբությունը, այլև, ավերելով գյուղական տըն-տեսությունը, շարժեց նաև հին ստրկատիրական ընտանիքը, վորը հիմնված եր բանության և ստրկության վրա:

Պատերազմի հետևանքով շատացան «ապօրինի ծնունդներ» (առանց պատկելու յերեխա բերելը): Պետություններ»

ստիպված յեղավ զիջել և զինվորական մթերափայ (պայոկ) տալ զինվորների «անպսակ» կանանց ու նրանց «ապորինի» զավակներին։ Այսպիսով ինքը պետությունն ստիպված յեղավ պսակի հիմունքները խախտել։ Բայց այս բոլորը դեռ ելի կնոջը իրավունքներ չեր տալիս, սրանով կինը չեր ազատվում ճորտությունից՝ վոչ ընտանիքում և վոչ պետության մեջ։ Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն իսկապես ազատագրեց աշխատավոր կնոջն ու գեղջկուհուն և նրա իրավունքները բոլոր հարցերում հավասարեցրեց տղամարդու իրավունքներին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԵՑ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ.

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջնականապես վոչընչացրեց թագավորական որենքները, վորոնք կնոջ իրավունքները սահմանափակում եյին և նրան հպատակեցնում տղամարդուն։

Խորհրդային որենքներն ամբողջապես պաշտպանում են աշխատավոր բնակչության շահերը և մասնավորապես հովանավորում են բանվորուհուն և գեղջկուհուն շահերին։

Աշխարհիս յերեսին վոչ մի ուրիշ յերկիր չկա, ուր կնոջ իրավունքներն այն չափով հավասարեցրած լինեն տղամարդու իրավունքներին, ինչպես այդ արված ե խորհրդային աշխարհում։ Ընկ. Լենինն ասում եր. «Մեզ մոտ, Ռուսաստանում չկա կնոջ ցած, ստոր ու զզվելի իրավազրկությունը, կամ անհավասար իրավունքներ ունենալը, վոր մնացել ե ճորտատիրական ժամանակներից, և վոր վերահաստատեցին, պահեցին ամբողջ աշխարհում շահամոլ բուրժուազիան և տիսմար ու սարսափահար մանր բուրժուազիան»։

Մեր Հիմնական Որենքը՝ Սահմանադրությունը, բանվորուհիներին ու գեղջկուհիներին Խորհրդային Միության բոլոր աշխատավորների հետ հավասար իրավունքներ ե տալիս՝ թե հասարակության մեջ, թե ընտանիքում և թե պետության մեջ։ Բայց խորհրդային իշխանությունը վոչ միայն հավասար իրավունքներ ե տալիս, այլ և աշխատում ե առաջ քաշել կնոջը։

Վոր նա մասնակցի քաղաքականության, հասարակական աշխատանքներին, վորպեսզի կարողանա ոգտագործելիր իրավունքը։ Զուր չե, վոր ընկ. Լենինն ասել ե. «Բայլշերմի և Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր անելիքներից մեկն ել այն ե, վոր քաղաքականության և հասարակական աշխատանքներին մասնակից անի նրանց, ովքեր ամենից շատ են ձնշված յեղել կապիտալիզմի ժամանակ»։ Կապիտալիստները նրանց ձնշում, խարում ու թալանում եյին, և այդ ձնշումը, այդ խաբեյությունն ու թալանն անխուսափելի յեր, քանի վոր գոյություն ուներ հողի, գործարանների ու ֆաբրիկաների մասնավոր սեփականությունը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց գործարանի, զավոդի ու հողի մասնավոր սեփականատիրությունը և հենց գրանով ել կապիտալիստներից խլեց այն թունավոր գենքը, վորով նրանք ձնշում եյին աշխատավորներին։

Բայց չե վոր գեղջկուհին կապիտալիստական կարգերում ձնշված եր վոչ միայն յեղած որենքներով ու իրավազրկությամբ, այլև տնային ու ընտանեկան աշխատանքներով ու հոգսերով։ Ընկեր Լենինն ասում ե, վոր «կապիտալիզմի ժամանակ կինը ձնշված եր կրկնակի՝ մեկ գոյություն ունեցող կարգերով, մեկ ել, վոր ամենազլիսավորն ե, կինն ստրկացած եր ընտանիքում, վորովհետև այնտեղ նու ծանրաբեռնված եր ամենասեկում, ամենածանը և ամենից ավելի շատ բթացնող ընտանեկան մանր մունը աշխատանքներով ու հոգսերով»։

Մեր խորհրդային որենքն աշխատում ե գեղջկուհուն հավասարեցնել տղամարդու հետ վոչ միայն քաղաքական իրավունքներով, այլ և տնտեսական դրությամբ։

Մեր հողային որենքներով գեղջկուհին ել իրավունք ունի հողաբաժին ստանալու, նա կարող ե տան տեր դառնալ, իր հողաբաժին ստանալու, նա պահանջելու, վոր ու ընտանիքում հավասար իրավունք ունի պահանջելու, իր բաժինը տան, և կարող ե անեցած շունեցածը բաժանեն, իր բաժինը տան, և կարող ե առանձնանալ այն ընտանիքից, ուր մինչև այդ ապրում եր, իսկ այժմ այն պատճառով, չի ուզում ապրել։ Վորպես այժմ, այս կամ այն պատճառով, չի ուզում ապրել։ Վորպես ընտանիքի հավասարաբարավունք և հավասարաբեր մի անդամ,

բաժանվելիս նա կարող ե հավասար մաս ստանալ ընտանիքի ամբողջ հարստությունից:

Խորհրդային որենքները գեղջկուհուն հավասարաիրավունք ու հավասարարժեք անդամ են դարձնում թե ընտանիքում, թե հասարակության մեջ և թե պետության առաջ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ. ԱՄՈՒԽՆԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Բուրժուական և վոչ մի յերկիր, նույնիսկ ամենաղեմուկրատականը, իր որենսդրությամբ այնքան չի ազատագրել կողմը ընտանիքում և ամուսնական հարցերում, ինչքան ազատագրել ե մեր խորհրդային որենսդրությունը:

Խորհրդային իշխանության ամուսնական-ընտանեկան իրավունքը վոչ միայն չի պակասեցնում կնոջ իրավունքը, այլ ընդհակառակը, առաջին հերթին պաշտպանում ե մոր և, վոր գըլխավորն ե, նրա զավակների շահերը:

Ընտանեկան-ամուսնական որենսդիրքը վերջնականապես վերացնում ե «պսակի սուրբ արարողությունը», վոր կատարվում եր յեկեղեցիներում, և վորի միջոցով ավելի շատ ելին ստրկացնում բանվորուհուն և գեղջկուհուն:

Խորհրդային Միության մեջ ամուսնությունը տղամարդու և կնոջ կամավոր համաձայնությունն ե: Ամուսնության ժամանակ մեր յերկրում միայն այն են նկատի ունենում, վոր պաշտպանեն մոր և վորդու իրավունքները:

Որինակ՝ ամուսնանալու համար հարկավոր ե, վոր ամուսնացողները շափահաս լինեն (տղամարդը՝ 18 տարեկանից փոքր չպիտի լինի, իսկ աղջկը՝ 16 տարեկանից): Ամուսնացողները շատ մոտ ազգականներ չպետք ե լինեն, պետք ե առողջ լինեն և, վոր ամենազլխավորն ե, պետք ե յերկուսն ել համաձայն լինեն իրար հետ ամուսնանալու: Առանց դրան ամուսնությունը կատարվել չի կարող:

Մեր խորհրդային որենսդրությունը կովում ե այն բոլոր նախապահարմունքների դեմ, վորոնք ստորացնում, խայտառակում են կողմը և շատ անզամ ստիպում են ինքնասապանություն կամ վորդեսպանություն կատարել:

Մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ, չկան անպատճեանայք, սիրականներ և ուրիշ այդպիսի խայտառակ անուններ, վոր սարքել ելին աշխատավորների թշնամիները հին, փտած կապիտալիստական աշխարհում:

Այս կինը, վոր մի տղամարդու հետ մոտիկ հարաբերությունների մեջ ե, նրանից յերեխաներ ունի, աշխատում ե նրա հետ միասին մի տնտեսության մեջ, նա արդեն այդ տղամարդու կինն ե, նրա բարեկամն ու կյանքի ընկերը, և վոչ այդ տղամարդը և վոչ մի ուրիշը հասարակության կամ պետության մեջ չեն կարող այդ կողմը վիրավորել կամ անպատճեան:

Այն կինն ու տղամարդը, վոր իրար հետ են ապրում, բայց «Զագս»-ում ցուցակագրված չեն, կարող են ուզած բռպեցին ցուցակագրվել վորպես ամուսիններ:

«Զագս»-ում ցուցակագրվելը նրա համար ե հարկավոր, վրպեսզի յերբ կինն ուղենա հաստատել, թե այս ինչ մարդն իր զայակի հայրն ե, առանձին նեղություններ քչաշի և կամ բաժանվելու դեպքում՝ կարողանա յերեխայի համար ապրուստի միջոց ստեղծել: Ցուցակագրելը զիսավորապես նրա համար ե, վոր պաշտպանվեն մոր և յերեխաների տնտեսական, նյութական շահերը:

Գյուղում կյանքն առաջ ե գնում: Իին տերտերական պսակները կամաց-կամաց վերանում են, և գյուղում տարածվում ե քաղաքացիական ամուսնությունը: Մի գեղջկունի պատգամավորունի գրում ե:

«Յես արդեն յերկու յերեխա ունեմ. բայց մեր գեղի տերտերը ամեն անդամ ինձ պատահելիս հարցնում ե, թե յերբ պետք ե պսակվեմ: «Զինի՝ թե մենակ «Զագս» գնալով բանը վերջացնելու յես, — ասում ե, — եղանակ չի կարելի, յեկեղեցու պսակը ուրիշ բան ա, նա յերկնային աստծուց ա գալի, յեկեղեղու պսակը պինդ ա լինում»: Յես հարցնում եմ, թե՝ պսակելու համար ինչ կառնես, ասում ե՝ 4 փութ ցորեն: Միտք արի, միաք, ինքս ինձ ասեցի. — Յես մեր գեղի առաջին պատգամավորունին եմ, յես չեմ գնալ յեկեղեցում պսակվելու, բայց վորպեսզի իմ ամուսնանալը մի բանով հայտնի դարձնեմ, կհավա-

քեմ մեր գեղի պատգամավորուհիներին ու մեր հարևան կանանց՝
մի թեթև հաց-մաց կուտենք, հետո յել՝ «Հայաստանի աշխա-
տավորուհի»-ն կվերցնեմ, մի լավ կկարդամ, կխօսենք, զբույց
կանենք, վերջն ել «Հայաստանի աշխատավորուհի» թերթին
կբաժանորդագրվեմ և մեր գեղի խրճիթ-ընթերցարանին կտամ-
եսպես մտածեցի, եսպես ել արի, և սրանով իմ պոսկվելու
պատմությունն ել վերջացավ, մեր տերտերի գլխացավանքն
ել»:

Ահա այսպես ե գրում՝ պատգամավորուհին։ Յեկ այս
մենակ մեկը չե. այսպես սկսել են մտածել շատ գեղջկուհիներ։
Նրանք սկսել են հասկանալ տերտերների խաթեբայությունը
և դրա համար ել պսակվելիս մենակ «Զագս»-ում ցուցակազրկե-
լով ել հաշիվը վերջացնում են։

Ամուսնությունը խորհրդային աշխարհում կոչ կնոջը առավելությունն ե տալիս, կոչ ել նրա իրավունքները պակասեցնում ե:

Ամուսնությունը չի խառնում մարդու և կնոջ ունեցած ները: Ինչ վոր տղամարդն ունեցել է մինչև պսակվելը, այդ մնում ե իբր նրա սեփականություն, իսկ ինչ վոր կինն է բերել իր հետ (հագուստ, տնային իրեր և այլն), այս ել մնում ե իբր կնոջ սեփականություն, և բաժանվելու ժամանակ ամուսինը վոչ մի գեպքում չի կարող կնոջ ունեցածը ձեռքիցն առնել:

Իսկ այն ամենը, ինչ վոր ամուսինները ձեռք են բերել պատկերուց հետո, միասին աշխատելով, այդ բոլորը յերկուսի սեփականությունն եւ համարվում և բաժանվելու ժամանակ հավասար բաժանվում եւ ամուսինների և յերեխանների միջև։ (Այս դեպքում նկատի չի առնվում, թե միասին ապրելիս կինը ինչով եւ զբաղված յեղել՝ ընտանեկան գործերով, թե դուրս աշխատելիս եւ յեղել): Կնոջ բաժինն այնքան ափելի շատ ելինում, վորքան նա յերկար եւ ապրել ամուսնու հետ և վորքան տիեզերի շատ յերեխաններ ունի։

Մարդն ու կիսը, թե ամուսնանալիս և թե ամուսնանալուց հետո, միասին ապրելու ժամանակ, կարող են իրենց ու

Նեցածի մասին իրար հետ ամեն տեսակ պայման կապել։ Բայց
յեթե այդ պայմանը կնոջ կամ մարդու ունեցվածքային իրա-
վունքները կրճատում ե, նա պարտադիր չի կարող լինել վոչ
ամուսինների և վոչ մի յերրորդ անձնափորության համար,
և ուզած լոպեյին նրանք կարող են հրաժարվել այդ պայմա-
նը կատարելուց։


Այս կետը պարզ կերպով պաշտպանում ե թույլ կողմի շահերը. իսկ վորովհետև թույլ կողմը մեծ մասամբ լինում ե կիսը, ուրեմն պարզ ե, վոր այս կետը պաշտպանում ե կնոջ շահերը:

Հին ժամանակ մարդը չեր քաշվում իր հիվանդ և աշխատանքի ընդունակությունից զրկված կնոջը փողոց նետելուց: Որենք-ները չեյին պահանջում, վոր տղամարդը միքիչ խղճմտանք ունենա գեպի կինը՝ վորպես գեպի կին և մար:

Մեր որենքները պաշտպանում են աշխատանքի ընդունակությունը կողմանը կողցրած և գործազուրկ կնոջը։ Որենքն ասում ե. «Կարիքի մեջ յեղող, աշխատանքի ընդունակությունից զըրկված ամուսինն իրավունք ունի մյուսից (իր ամուսնուց) ստանալու ապրուստի միջոց, յեթե դատարանը կվորոշի, վոր ամուսինը կարող է ոգնել նրան»։

Բայց վորպեսզի նյութական պայմանները չստիպեն կնոջը, հակառակ իր կամքի, իր գոյությունը պահելու համար, ապրել իր մարդու հետ, դրա համար որենսդիրքն ասում ե. «Կարիքի մեջ յեղող կինը իրավունք ունի նպաստ (ապրուստի միջոց) ստանալու իր ամուսնուց և բաժանվելուց հետո, մինչև վոր պայմանները կփոխվեն» (մինչև կինը մարդու կգնա կամ աշխատանքի կկանգնի):

Խորհրդային յերկրում մարդն ու կինը յեթե չեն ուզում
իրար հետ ապրել, առանց իրար նեղություն տալու, շատ հեշ-
տությամբ, ազատ ու արագ կերպով կարող են իրարից բա-
ժանվել։ Չե՞ վոր բոլորիս համար պարզ է, վոր զուռվ իրար
սիրել չի կարելի։ Ինչ ուզում ես արա, յեթե մարդն ու կինը
իրար չեն սիրում, ուրիշ պահագնանց իրար հետ պահելը
միաք չունի։



Այս բանի համար հին որենքները շատ պարզ որինակ են տալիս: Ամուսինները պարտավոր եյին անպատճառ իրար հետ ապրել: Իհարկե, որենքն ասում եր՝ պետք ե իրար հետ ապրել իրար սիրելով և հաշտ ու խաղաղ: Տանից հեռացած կնոջը զոռով բերում եյին նորից ամուսնու տունը: Բայց դրանից ինչ եր դուրս գալիս—վոչինչ: Ահա այսպես եր լինում: Դատարանը վորոշում եր, վոր տանից հեռացած կնոջը յետ տանեն ամուսնու տուն: Դատական կատարածուն (սուդեբնի պրիստավը) գեղջկուհուն բերում եր մարդու տուն և դատարանի տված թղթի վրա գրում եր, թե դատարանի վորոշումը կատարված ե: Գրում եր և հեռանում, իսկ նրա յետեից հեռանում եր և գեղջկուհին: Ամուսինը նորից դիմում եր սուդեբնի պրիստավին, բայց սա պատասխանում եր, վոր ինքն իր պարտականությունը արդեն վերջացրել ե, դատարանի վճիռը կատարել ե, իսկ յեթե կինը նորից հեռացել ե, թող զյուղացին նորից դատարան դիմի:

Բանից դուրս ե գալիս, վոր գեղջկուհուն իր տունը բերելը բավական չեր. հարկավոր եր և մի ուրիշ բան, մի ուրիշ ուժ, վոր նրան մարդու մոտ պահեր: Ու չնայած որենքներին, չնայած հասարակության վատ վերաբերմունքին, կինը ելի չի կարողանում մնալ իր չսիրած ու զզվելի մարդու մոտ:

Հին ժամանակ, յեթե նույնիսկ մարդու կին տեսնում եյին, վոր իրար հետ ապրել չեն կարողանում և իրար զուր տեղը շտանջելու համար ուզում եյին իրարից բաժանվել, ելի չեյին կարող բաժանվել: Ահագին ծախս ու նեղություն եր հարկավոր իրարից բաժանվելու համար. և պարզ ե, վոր միայն հարուստները կարող եյին անել այդ քայլը:

Գյուղացին, մանավանդ գեղջկուհին, համարյա թե յերբեք չեր կարող բաժանվել իր չսիրած ամուսնուց: Յնչ յեկեղեցին և հասարակությունը արգելը եյին դնում նրա առաջ ու գեղջկուհուն խրատում եյին. «Ո՞ւր պիտի գնաս. յերի աստված ե ցանկանում, վոր դու չարչարվես. աստված ում վոր սիրում ե, նրան չարչարում ե, նա քեզ վրա՝ ծանր խաչ ե գրել, ուրեմն պետք ե առանց բողոքելու տանես այդ խաչը.

Այսնքից դժգոհելը մեծ մեղք ե: Այսպես եյին խրատռւմ ու ներշնչում գեղջկուհուն: Յեվ խեղճն ստիպված տանում եր այդ ծանր խաչը սինչեմ մահ, թառամում եր ամուսնու և ընտանիքի բռնակալ լծի տակ:

Այժմ, Խորհրդային Միության մեջ յեթե յերկու ամուսիններն ել համաձայն են իրարից բաժանվելու, հարկավոր ե միայն այդ մասին հայտնել «Զագս»-ին, և ամուսնությունը շատ հեշտությամբ, շուտ և առանց վորեւ դժվարության կլուծվի:

Պակը կարող ե քանդվել նաև ամուսիններից մեկի ցանկությամբ, միայն դատարանի միջոցով:

Ամուսնությունն աղատ դարձնելու հանգամանքը այն լավ կողմն ունի, վոր վոչ տղամարդը և վոչ կինը չեն վախենում ամուսնանալուց, վորովհետև յեթե ամուսնությունից հետո տեսնեն, վոր իրար հետ չեն հարմարվում, չեն կարողանում ապրել, ազատ կերպով կարող են բաժանվել իրարից: Այժմյան որենքը նպաստառ է ամուսնության շատանալուն: Որինակ՝ Ամուսնություն 1911-ից—14 թիվը ամուսնացել են 600-ից մինչեւ 650 հազար զույգ, իսկ 1921-ից—1922 թիվը ամուսնացել են 900 հազար զույգ:

Ուրեմն խորհրդային որենքի ժամանակ 2 տարում մեկ ու կես անգամ ավելի յեն ամուսնացել, քան հին կառավարության ժամանակ՝ 4 տարում:

Ճիշտ նույնպես ել մոտ Հայաստանում վերջին տարիներս (խորհրդային իշխանության հաստատվելուց հետո) ավելի շատ են ամուսնանում, քան թե առաջ:

Մյուս կողմից տարեցտարի ավելի շատերն են ամուսնության համար «Զագս»-ին դիմում. այսպես, որինակ՝ Հայաստանի 9 գավառներում 1923 թվին «Զագս»-ում ցուցակագրվել ե 5339 ամուսնություն, 1924 թվին,—7385, իսկ 1925 թվի առաջին կիսամյակում 4439. այս թվերը ցույց են տալիս, վոր տարեցտարի ավելի շատերն են «Զագս»-ին դիմում ամուսնության համար:

Այժմ ամուսնությունը մեծ մասամբ կատարվում ե ամուսնացողների համաձայնությամբ, դրա համար ել, չնայած

բաժանվելու ազատություն կա, բայց նոր ամուսնացածներից շատ քչերն են բաժանվում իրարից:

Հայաստանում ևս ամուսնալուծության մասին յեղած թվերը ցույց են տալիս, վոր տարեցտարի քչանում ե ամուսնալուծությունը. 1923 թվին բաժանվել են 494 զույգ, 1924 թվին՝ 381, իսկ 1925 թվի կիսամյակում՝ 273:

Հեղափոխությունից անմիջապես հետո խիստ շատացան բաժանվելու դեպքերը, վորովհետև հեղափոխությունից առաջ ամուսնացածներից շատ շատերն իրենց կամքով չեյին ամուսնացել: Նրանց ամուսնացը ել եյին ծնողները—զանազան հաշիվներով, առանց ամուսնացողի կամքը հարցնելու: Դրա համար ել, հեղափոխությունից հետո, հենց վոր իրավունք ե տրվում բաժանվելու, իրար չսիրող, իրարից դժգոհ ու զոռով ամուսնացրած զույգերն սկսում են բաժանվել:

Այդ մասին մի գործարանի պատգամավորուհի գրում ե. «Ամբողջ կյանքս յես սաշել եմ իմ գաղան մարդու բռնությունների տակ: Շատ անգամ գիշերները լաց լինելով եմ լուսացրել: Ինձ ծեծում եր, հարբած տուն եր գալիս, հայհոյում, գոռում, գոռգոռում, հետո յել սկսում մաղերիցս քաշքշել ու ծեծել: Վոտի տակ գցել, տրորել: Ամեն տեսակ տանջանք ու վիրավորանք տալիս եր ինձ, և բոլորը զուր տեղից, իսկ յես ստիպված եյի նրա հետ ապրել, վորովհետև որենքը չեր թողնում, վոր բաժանվենք. առանց որենքի յեթե յես թողնեյի, հեռանայի, վոչ մի տեղ ինձ չեյին ընդունի, և յես անոթի-ծարագիմնայի: Բավական ե, այժմ մեր փրկությունն ե հասել. խորհրդացյին իշխանությունը մեղ ազատություն տվեց, և յես հիմա բաժանվում եմ իմ ամուսնուց, ել նրա հետ ապրել չեմ կարող, չեմ ուզում»:

Իհարկե, յերբ վոր բաժանվելը հեշտացավ, շատ անգամ տղամարդիկ այդ բանից ուզում են ոգտվել, և ոգտվում ել են: Որինակ՝ գիտեն, վոր հեշտությամբ կարող են բաժանվել, ամուսնանում են մի աղջկա հետ, միքիչ ապրում ու բաժանվում: Բայց խորհրդացյին որենքն այդ բանի դեմ կվառում ե և ամբողջապես պաշտպանում ե կնոջ ազատությունը և նրա անտեսական շահերը:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ընտանեկան և ամուսնական որենքներից ամենազլիսավորը և ամենահիմնականն այն է, վոր այդ որենքները լիովին պաշտպանում են յերեխաների շահերն ու իրավունքները:

Մինչև չափահաս դառնալը ծնողները պարտավոր են պահել և դաստիարակել իրենց յերեխաներին:

Յերեխային առանց խնամքի թողնելը համարվում է հանցանք, և յերեխային անխնամք թողնող ծնողը պատժվում ե որենքով:

Խորհրդացյին յերկրում յերեխան վոչ թե ծնողի, այլ հասարակության սեփականությունն է համարվում, այդ պատճառով ել ծնողներն իրենց յերեխաներին պիտի պատրաստեն հասարակական և պետական ոգտակար գործունեյության համար:

Կոմմունիստական կուսակցությունը և խորհրդացյին իշխանությունն ուղում են այնպես լինի, վոր յերեխաները դաստիարակություն ստանան պետության հաշվին: Բայց վորովհետև մեր իշխանությունն աղքատ ե, և հենց իրենք աշխատավորներն ել կազմակերպված չեն, դրա համար ել բոլոր յերեխաներին չի կարելի հասարակական ու պետական գաղտիարակության տակ առնել: Այս ե պատճառը, վոր մատադսերների դաստիարակությունը գցած ե ծնողների վրա:

Յեթե ծնողներն իրենց զավակին հարկավոր դաստիարակությունը չեն տալիս, այլ, ընդհակառակը, ֆիզիկապես ու բարոյապես այլասերում են նրանց, այդպիսի ծնողները մեր որենքներով դատարանի միջոցով կարող են զրկվել ծնողական իրավունքներից:

Բայց ծնողական իրավունքներից զրկվելով՝ նրանք չեն ազատվում իրենց յերեխաներին ապրուստի միջոց տալու պարտականությունից:

Խորհրդացյին որենքով ամուսնալուծությունը (պսակիքանդելը, բաժանվելը) պիտի չծանրացնի յերեխայի նյութական անտեսական դրությունը: Յերեխան հոր մոտ կմնա-

թե մոր մոտ—միկնույն ե, նա պիտի իրեն ապրուստի միջոցն ստանա:

Բաժանվելու ժամանակ դատարանն ե վորոշում, թե յերեւան ամուսիններից վորի մոտ պիտի մնա. և այդ վորոշումն արվում ե անպատճառ յերեխայի ոգտին: Յերբ յերեխան թողնը վում ե ծնողներից մեկի մոտ, դրանով մյուսը չի ազատվում իր յերեխային ապրուստի միջոց տալուց, մինչև յերեխայի չափահաս դառնալը:

Պետությունն ամեն կերպ ոգնում ե ծնողներին յերեխային ապահովելու գործում և նա թեթևացնում ե ապահովման միջոցների գանձումը: Ապրուստի միջոց ստանալու համար դատարան տված դիմումներն ազատվում են դատարանական և այլ ծախսերից և նման դիմումները կարող են տրվել հայցվորի (դատարան դիմողի) կողմից՝ հենց իր բնակության տեղում:

Ինչ վոր վորոշվում ե յերեխայի պահպանման համար ստանալ, այդ պահանջվում ե առաջին հերթին, և հետո միայն նրանից պահանջում են ուրիշ պետական հարկեր, տուրքեր և այլն:

Խորհրդային որենքով բոլոր յերեխաններն իրենց ծնողների վերաբերմամբ, հասարակության մեջ ու պետության առաջ, միկնույն իրավունքներն ունեն: Այստեղ նկատի չի առնվում նրանց ծնողների ամուսնության «Զագս»-ում ցուցակագրված լինելն ու չլինելը:

Ել «ապօրինի ծնված» յերեխաննեց չկան: Այս հարցում խորհրդային և բուրժուական որենքների մեջ շատ մեծ տարբերություն կա: Որինակի համար՝ Ֆրանսիայի որենքով այն կինը, վոր ապօրինի զավակ ունի, իրավունք չունի դատարանի միջոցով պահանջելու, վոր յերեխայի հայրն իր զավակին պահելու միջոց տա: Հայրը յեթե ցանկանա, կարող ե ոգնել, բայց մայրն իրավունք չունի դատարանին դիմելու:

Յեթե մի կնոջ և տղամարդու իրար հետ ապրելը ցուցակագրված չե «Զագս»-ում, բայց կինն արդեն այդ մարդուց յերեխա ունի, կարող ե դիմել «Զագս», վոր հաստատեն յերեխայի հոր ով լինելը: Յերբ «Զագս»-ն այսպիսի դիմում ե ստանում, դիմումի մեջ ցույց տված մարդուն հայտնում ե, վոր նա այս

ինչ կնոջ յերեխայի հայրն ե: Յեթե 2 շաբաթվա ընթացքում այդ մարդը չի հայտնում, թե ինքը չի այդ յերեխայի հայրը, կնշանակե արդեն նա ընդունում ե, վոր իսկապես նրա հայրն ե, և իր վրա յե վերցնում հայրական բոլոր պարտականությունները: Բայց ցույց տված հայրը կարող ե հրաժարվել, չընդունել, վոր այդ յերեխան իրենն ե: Այդպիսի դեպքում գործը արվում ե դատարան: Դատարանը հաստատում ե, թե ով ե յերեխայի հայրը և հայրական բոլոր պարտականությունները դնում ե նրա վրա.

Շատ հայրեր ոգտվում են այն հանգամանքից, վոր կարող են հրաժարվել, թե իրենք են այսինչ յերեխայի հայրը: Շատ անգամ, վորպեսզի յերեխային պահելու համար փող տալուց ազատվեն, հայրը սովորեցնում ե իր ծանոթ ու բարեկամադամարդկանց, վոր նրանք դատարանում հաստատեն, թե յերեխայի մայրն իրենց հետ ել մոտիկ հարաբերություններ են նեցել, այսինքն՝ իրենց հետ ել ե ապրել: Բայց մեր խորհրդային յերկրի որենքներն այսպիսի դեպքերում ել յերեխայի ապրուստն ապահովելու ճամպա յեն գտնում: Այդ դեպքում վկանորդային որենքում միասին առաջարկում է ապահովելու համար ստալիս են իրենց բաժինը յերեխային պահելու և կրթություն տալիս համար: Տղամարդիկ կոլեկտիվ (խմբովին) պատասխանատվության են յենթարկվում նաև այն դեպքում, յերեխայի ապրուստի միջոցները: Այս նշանակում ե, վոր յերեխայի հայրը համարվում ե մեկը, բայց մյուսներն ել հոր միջոցով տալիս են իրենց բաժինը յերեխային պահելու և կրթություն տալու համար: Տղամարդիկ կոլեկտիվ (խմբովին) պատասխանատվության իր որենքներով միշտ պաշտպանում ե յերեխանների շահերը: Այս նպատակով նա ընտանեկան և ամուսնական որենքների նոր նախագծի մեջ մի գլուխ ե մտցնում՝ վորդեգրության մասին, վորով և քչացնում ե անապաստան յերեխանների թիվը:

Վորդեգրած յերեխաներն ամեն տեսակետից հավասար-
վում են հարազատ յերեխաներին:

Խորհրդային որենսդրությունը կնոջ իրավունքներն ամեն
կողմից հավասարեցնելով տղամարդու իրավունքներին, նրան
վերջնականապես ձորառությունից ազատագրելու առաջին քայլն ե
անում միայն: «Խորհրդային իշխանությունը բոլորովին վերացրել
ե կնոջ զգվելի, սուր ու կեղծավոր անհավասարությունը ընտա-
նեկան, ամուսնական և յերեխայի վերաբերմամբ ունեցած հար-
ցերում: Բայց դա դեռ կնոջ ազատագրման առաջին քայլն ե:
Սակայն և վոչ մի բուրժուական յերկիր, նույնիսկ ամենազե-
մոլորատականը, չի համարձակվել այդ առաջին քայլն անել:
Չի համարձակվել, վորովհետև վախեցել ե սուրբ մասնավոր սե-
փականությունից»: (ԱԵՆԻ):

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՄ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՅԵՎ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ.

Դեռ մինչև հիմա յել մեր գյուղերում գոյություն ունեն
հին կարգերը, քարացած սովորություններն ու նախապաշար-
մունքները: Ընտանիքի խավար ու հետազեմ վերին շերալ
(մեծահասակները) չի թողնում, վոր ընտանեկան կենցաղա-
յին (նիստուկացի) ձեռքը փոխվեն: Կիսը դեռ մեծ մասամբ
ընտանիքում հավասար իրավունքներ չունի: Բայց հին ընտանիքի
հիմքերն արգեն քանդվում են, նրա մեջնոր տարածայնություն-
ներ են մտնում:

Կիսն ել, վորպես ընտանիքի՝ հավասարաիրավունք ան-
դամ, մյուսների պես ուզում ե, վոր իրենց անտեսությունը
լավանա: Նա աշխատում է մասնակցել տնտեսական-ընտանե-
կան բոլոր հարցերի լուծմանը: Նա սկսում է մասնակցել գյու-
ղի հասարակական աշխատանքներին: Գեղջկուհու մտավոր հաս-
կացողությունները և նրա ակտիվությունը կամաց-կամաց բար-
ձրանում ե: Առաջավոր գեղջկուհին աշխատում է ստեղծել
տնտեսության նոր ձեռք և փոխել ընտանեկան-կենցաղային
հարաբերությունները: Նա ընտանիք է մտցնում նոր հասկա-
ցողություններ, նոր ձգտումներ:

Դրա դեմ շատ են բողոքում ծերերն ու տան տերերը,
վորոնք մինչև հիմա վոչ մի կերպ չեն ուզում համաձայնվել,
վոր կիսն ել ընտանիքում հավասար իրավունքներ ունի և բա-
ժանվելու ժամանակ հավասար բաժին կարող ե ստանալ:

Ընտանիքում կատարվող այս պայքարը կամ պատճառ է
դառնում, վոր ընտանիքը բաժանվի, և կամ հաղթությունը
տանում ե նոր հոսանքը, և ընտանիքը վերակազմվում է նոր
փոխհարաբերություններով: Բայց այսպես լինում ե միայն
այն ընտանիքներում, ուր վոր կան հասկացող կանայք և յե-
րիտասարդներ (Զահեներ): Իսկ այն ընտանիքում, ուր կինը
դեռ աչք չի բացել կամ վորտեղ յերիտասարդներ չկան, վոր
նրան թե ու թիկունք լինեն, այդպիսի ընտանիքում կինը դեռ
առաջվա պես ստրուկի նման հպատակվում է իր ամուսնուն և
ամուսնու ընտանիքին: Իսկ յեթե չի հպատակվում, պատահում
է, վոր առանց մի բան տալու կնոջը՝ սնից դուրս են գցում
կամ չհպատակվելու համար, կամ զանազան տնտեսական պատ-
ճառներով: Տանից դուրս գցած խեղճ, մութ ու խավար գեղջ-
ճառներում է իր իրավունքները պաշտպանելու համար
կուհին սկսում է իր իրավունքները պաշտպանելու համար
գիմել կին-բաժին և դատարան: Բայց որո՞րի վրա պակասում
ու համբերատար կին-ստրուկների թիվը: Շատ
է հպատակվող ու համբերատար կին-ստրուկների թիվը: Շատ
է պատահում, վոր կինն իրեն դուրս գցելուց հետո այս-
քիչ է պատահում, վոր կինն իրեն դուրս գցելուց հետո այս-
պես մտածի: «Դուրս գցեցին, վոչ մի բան ել չավին: Են, ինչ
արած, ինչ կարող եմ անել:» Վոչ, հիմա վոր կուսակցու-
թյունը կանանց մեջ լայն աշխատանք է տարել գեղջկուհին ել
այդպես չի մտածում: Նա չի ուզում հաշտվել, համաձայնվել,
վոր ինքն ընտանիքում իրավագուրկ ե: Պրա համար ել գնում ե
դատարան, վոր այնտեղ կարողանա իր իրավունքների տերը դառ-
նալ: Դատարանով կամ հողային հանձնաժողովների միջոցով բա-
ժանվող ընտանիքների թիվը շատանում է: Գեղջկուհին չի հրա-
ժարվում, ձեռք չի քաշում իրեն հասնող հավասար բաժնից:
Ընտանիքների բաժանվելու պատճառները շատ շատ են: Պա-
տահում ե բաժանվում են, վորովհետև ամուսինը թամբալ ե,
լավ չի աշխատում և ընտանիքի տնտեսությունը վատնում ե,
կամ թե՝ բաժանվում են, վորովհետև ամուսինը և ընտանիքը

խավարամիտ են, չեն թողնում, վոր կինը աղատազրվի և մասնակցի գլուղի հասարակական աշխատանքներին։ Այս բոլոր պատճառների հիմքն այն է, վոր կինը կովում և ընտանեկան-կենցաղային այն հին սովորությունների ու կարգերի դեմ, վորոնք իրեն իրավունքից զրկում ու ստրուկ են դարձնում։

Բերենք միքանի որինակ, թե ինչու յե բաժանվում ընտանիքը։

1. Զահել հարսը, վոր պատգամավորուհի յե, առաջարկում ե իր կեսարին տնտեսության մեջ վորոշ փոփոխություններ մտցնել, վորոշ մեքենաներ ձեռք բերել։ Կեսարը բոլորովին լսել չի ուզում։ «Դու քո ջահել տեղով ուզում ես ինձ խելք սովորցնել։ Յես եմ տան տերը—ինչ կուզեմ, կանեմ։ Հեռ ուզում, դուրս կորիր տանից»։ Յեվ այսպես տանից դուրս դցած հարսն ստիպված ե լինում դիմել դատարան ու պահանջել իր բաժինը։

2. Հիմա յել դեռ սովորություն ե, վոր ծնողներն իրենց տղային կամ աղջկանը ամուսնացնում են առանց նրանց կամքը հարցնելու։ Շատ անգամ տղան կամ աղջիկը չեն ուզում կատարել ծնողների կամքը, վորովհետև նրանց ընտրած հարսնացուն կամ փեսացուն իրենց դուր չի գալիս։ Նրանք կամ ուղղակի հակառակում են ծնողներին կամ թագուն ամուսնում են իրենց ուզածի հետ։ Յեվ ահա այսպիսի մի դեպք ե պատահել։

Տղան թագուն ամուսնանում ե այն աղջկա հետ, վորին ինքը սիրում ե, բայց ծնողները չեն ուզում։ Դրա համար հայրը տանից դուրս ե անում նրան ու մի փոքրիկ տնակ ե տալիս ապրելու։ Յերեք տարի միասին ապրելուց հետո տղան մեռնում ե։ Տղայի հայրն այդ փոքրիկ տնակն ել խլում ե հարսից ու դուրս գցում նրան՝ յերեխան գրկին։ Հարսը գնում ե կին-բաժին, այնտեղից ել դատարան և պահանջում ե, վոր կեսարն իր ունեցածը բաժանի իրեն հետ։

Բայց ընտանիքների այս ձեռվմասերի բաժանվելը գեղջկուն ոգուտ չի տալիս։ Վատանում են նրա տնտեսական պայմանները, ավելանում ու ծանրանում են տան աշխատանքները

և այսպիսի մանր տնտեսությունները փոխանակ ազատագրելուր ընդհակառակը, գեղջկունուն ավելի լեն ձնշում ու ստրկացնում։ Դրա համար ել ավելի գիտակից գեղջկունները, ընտանիքից բաժանվելուց հետո, աշխատում են մտնել վորեւ արտել և հենց դրանով ել փոփոխում են կենցաղն ու նպաստում իրենց աղատագրությանը։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ամուսնական հարաբերությունների ասպարիզում ևս նկատվում ե, վոր գեղջկունին պայքար ե մզում անկախություն ձեռք բերելու համար։ Շատ անգամ ամուսինը չի համաձայնվում, վոր կինը մասնակցի հասարակական աշխատանքներին, նրան ծեծում ե և ամեն կերպ ստիպում, վոր հին ձեվերով ապրի։ Կինը չի ուզում կատարել նրա կամքը։ Յեվ այս բոլորը վերջանում ե նրանով, վոր կամ կինը իր մարդուն հասկացողության ե բերում և նրան ել ե քաշում հասարակական աշխատանքների մեջ և կամ թե չե բաժանվում։

Ամուսնալուծությունը կատարվում ե կամ կնոջ պահանջով, կամ ամուսնու պահանջով և կամ յերկուսի համաձայնությամբ։ Յերբ կինն ե պահանջում բաժանվել, նա բաժանվում ե, վորպեսզի իր կյանքն ավելի լավ դասավորի և հասարակության մեջ պետքական անձնագորություն լինի։ Այս խմբին են պատկանում գիտակից գեղջկունի պատգամավորունները և հասարակական աշխատանքի սեր ունեցողները։

Ահա մի որինակ—Հակոսուակ ամուսնու կամքին՝ կինը մասնակցում ե կանանց ժողովներին։ Զայրացած ամուսինը մի որ վոտի տակն ե զցում կնոջը ու մի լավ ծեծում։ Կինը դիմում ե դատարան և բաժանվում ամուսնուց, չնայած վոր նրանք իրար հետ ապրել եյին 22 տարի և 8 յերեխա ունեյին 1-ից մինչև 18 տարեկան հասակի։ Դատարանի վորոշմամբ այդ յերեխաներն ել մնում են կնոջ մոտ։ Այժմ այդ կինն աշխատում ե դյուղական պատգամավորական ժողովում և գյուղ-փոխողկոմում։

Այսպիսի գիտակից, հասկացող կինն ամուսնուց բաժան-

վելուց հետո յել չի կորչում, վորովհետև նրան պաշտպանում են թե դատարանը և թե խորհրդային այլ կազմակերպությունները:

Շատ անգամ՝ մարդաթող գեղջկուհին, ապրուստի միջոց չունենալու պատճառով, նորից ամուսնանում ե հենց առաջին պատահած մարդու հետ: Բայց այդ մարդը նրան միքիչ պահելուց և աշխատեցնելուց հետո դուրս ե գցում յերեխաների հետ ու ապրուստի միջոց ել չի տալիս: Այսպիսի գեղջում գեղջկուհին պիտի նորից դիմի դատարան և պահանջի, վոր ամուսինը նրա հետ բաժանի իր ունեցածը և յերեխաներին ապրուստի միջոց տա:

Ամուսնալութության հեշտությունը շատ անգամ տղամարդու կողմից ոգտագործվում ե կեղտոտ նպատակների համար: Մեր մութ ու խավար գյուղերում ամեն տեսակ չարաշահություններ են անում: Որինակ՝ 1) տղային ամուսնացնում են, վոր աղջկա բաժինքը վերցնեն և իրեն ել աշխատեցնեն. 2) միքանի անգամ ամուսնանում և դուրս են գցում կնոջ՝ առանց մի բան տալու: Որինակ՝ մի տեղ այսպիսի գեղջք ե պատահել. — Ամուսինը խլել ե կնոջ ոժիտը և կնոջը հղի դրության ժամանուկ տնից դուրս ե գցել: Դրանից հետո անմիջապես ամուսնացել ե մի ուրիշ՝ հարուստ կնոջ հետ, վոր նրա բաժինքն ել ստանա: Մի ուրիշ գեղջք. — Գյուղի կուլակն աշխատանքներն սկսվելու ժամանակ վերցնում ե մի բանվորուհի աղջիկ՝ վորպես կին: Ամբողջ ամառը պահում ե մոտք, աշխատեցնում, և յերբ գալիս ե աշունը, յերբ աշխատանքները վերջանում են, արդեն հղիացած այդ աղջկան տնից դուրս ե գցում:

Բայց այսպիսի գեղջքեր շատ չեն պատահում: Խորհրդային որենքն ու իշխանությունը միշտ պաշտպանում են կնոջ շահերը, դրա համար ել այժմ կնոջ զրությունը բավականին թեթևացել ե: Որինակ՝ մի պատգամավորուհի գրում ե. «Մի ժամանակ իմ մարդն ինձ շատ եր ծեծում, բայց հիմա բաժնվելուց վախենում ե. հետո շատ լավ ե»: Մի ուրիշը գրում ե. «Հիմի յես ել չեմ վախենում իմ ամուսնուց: Յեթե հետևակ չի վարվիլ՝ կզնամ դատարան և կբաժանվեմ»:

Պատահել ե և այսպիսի գեղջք: Ամուսինը բաժանվել ե կնոջից: Կինը դիմում ե դատարան և պահանջում յերեխային պահելու միջոցներ: Դատարանը վորոշում ե գյուղացուց առնել մի կով և տալ կնոջը: Բայց գյուղացին նորից համաձայն վում ե ապրել իր կնոջ հետ, վորպեսզի չզրկվի կովից: 20 տարեկան մի յերիտասարդ 2 տարի կնոջ հետ ապրելուց հետո բաժանվում ե նրանից: Բայց յեռք իմանում ե, վոր ինքը պաժանվում է նրանից: Վայց յեռք իմանում ե, վոր ինքը պարտավոր ե կնոջ ու յերեխայի ապրուստի համար միջոցներ տալ, նորից միանում ե, և այժմ ել ապրում են իրար հետ:

ԿՆՈՉ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ.

Յեթե դատարանում գործի քննությունը ճիշտ գրվի, յեթե մի կողմից ել հիմնարկությունները, կազմակերպություններն ու գյուղացիները ոգնեն դատագորին—մոր և յերեխայի շահերը միշտ կարելի կլինի պաշտպանել: Գյուղական ընտաշները միշտ կարելի գուրս արած կնոջ և նրա յերեխայի նիքից յեթե չի կարելի դուրս արած կնոջ և նրա յերեխայի համար փող պահանջել, ապա կարելի յե պահանջել մթերք (հաց, յուղ, պանիր և այլն) և այդպիսով կարելի յե պահանզել: Թե կնոջը և թե յերեխային:

Դատարանը շատ մեծ նշանակություն ունի գեղջկունունտեսական և կենցաղային շահերը պաշտպանելու հարցում: Դրա համար ել այդ նշանակությունն ավելի մեծ կլիներ, յեթե դատարանի աշխատանքներին մասնակցելին և գեղջկունիները:

Ո՞վ ավելի ուշադիր, ավելի մանրամասն կարող ե մոտենալ շահերական ու ամուսնական ցավոտ հարցերին, քան գեղջկունին:

Գեղջկունունտեսական ազատազրման գործը հենց իրեն գեղջկունունտեսական անհրաժեշտ ե, վոր գեղջկունին մասնակիցի դատարանի աշխատանքներին՝ վորպես ատենակալ և այն: Բայց այս հարցի կարևորությունը գեռ չեն հասկացել դատարանը, ժողովուրդը, նույնիսկ ինքը գեղջկունին:

Դեռ շատ քիչ գեղջկունիներ կան, վոր մասնակցում են դատարանի աշխատանքներին, իսկ դատարանում պատասխանականի աշխատանքներին վարող գեղջկունին՝ վոր մեկը չկա:

Նույնիսկ այն գեղջկուհիները, վոր ատենակալ են ընտրված դատարանում, նրանք ել իրենց աշխատանքներին կանոնավոր չեն հաճախում:

Կոմմունիստական կուսակցությունն այս բանի վրա շատ մեծ ուշադրություն է դարձնում: Նա ցանկանում է, վորպ գյուղական վարչական մարմիններում, հասարակական հիմնարկություններում, դատարաններում և ամեն տեղ գեղջկուհին ել իր տեղն ունենա, մասնակցի աշխատանքներին: Կուսակցությունը փորձել է այն ել, վոր ամեն տեղ և ամեն դեպքում պաշտպանվեն գեղջկուհու տնտեսական, կենցաղային և ամեն տեսակի շահերն ու իրավունքները: Գեղջկուհի ատենակալների թիվը տարեցտարի ավելանում է: Պատգամավորական ժողովների իրավաբանական սեկցիաներում նրանք մանրամասն ծանոթանում են խորհրդային որենքներին և դատարանի կազմությանը: Վարժվում են կնոջ ազատագրման գործում գեղջկուհի ատենակալների կատարելիք գերին ու նշանակությանը:

Այժմ արդեն այդ աշխատանքներն իրենց ազգեցությունը թողել են գյուղական հասարակական կյանքի վրա:

Որորի վրա ավելանում են գործունյա և հասարակականու դատարանական աշխատանքներին մասնակցող կանայք: Գեղջկունին արդեն սովորել ե պաշտպանել իր շահերը թե ընտանիքում և թե հասարակության մեջ: Յերբ կեսարը կատամուսինը կոպիտ են վարդում նրա հետ, նա առանց քաշվելու դիմում է դատարան:

Նոր կենցաղ ստեղծելը, խորհրդային որենսդրությունն ամբողջապես իրականացնելն ու կյանքի մեջ մտցնելն ամենալավ գրավականն ե՝ գյուղի դարավոր նախապաշարժունքներն ու բռնությունները հաղթահարելու և վերացնելու համար։ Մակայն միայն բոլոր խորհրդային և հասարակական կազմակերպությունների ոգնությամբ, բոլոր աշխատավորների, բանվորների, գյուղացիների և գլխավորապես գեղջկուհիների և բանվորուհիների մասնակցությամբ ու Կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ կարելի յե կյանքի մեջ իրականացնել խորհրդային որենսդրությունը և գյուղում փոխել ու վե-

ըակագմել ընտանեկան կենցաղային հարաբերությունները։
Ով ե կենցաղային պայմաններով ավելի շատ ձնշված ու
ստրկացած, քան թե գեղջկուհին և բանվորուհին։ Նա յե, վոր
ամբողջովին պիտի ցանկանա փոխել, վերակազմել կյանքը նոր
հիմունքներով։ Հասարակական ու խորհրդային կազմակերպու-
թյուններում ակտիվ կերպով մասնակցելով, կոմմունիստական
կուսակցության և խորհրդային իշխանության աշխատանքներին
աջակցելով, ոգնելով՝ բանվորուհին և գեղջկուհին կարող են
ստեղծել այնպիսի հասարակությունն, վորտեղ հին ստրկության
ու բռնության հետքն անդամ չի լինել։





ՀՀ Ազգային գրադարան

NL0215281

37.841